ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Զինծառայող կանանց սոցիալական իրավունքները և երաշխիքները

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՁԻՆԾԱՌԱՅՈՂ ԿԱՆԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

«Հինծառայող կանանց սոցիալական իրավունքներն ու երաշխիքները» տեղեկատվական ուղեցույցը մշակվել և տպագրվել է Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող 2019-2022 թթ. գործողությունների ծրագրի շրջանակում:

Սույն ձեռնարկում արտահայտված տեսակետները հեղինակ Արմեն Գրիգորյանինն են և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Քաղվածքների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրելի է, բացառությամբ կոմերցիոն նպատակների, քանի դեռ պահպանվում է տեքստի ամբողջականությունը, հատվածը համատեքստից դուրս չի օգտագործվում, չի տրամադրում թերի տեղեկատվություն կամ ընթերցողին չի շեղում տեքստի բնույթից, նպատակից և բովանդակությունից: Աղբյուրի տեքստը միշտ պետք է ճանաչվի հետևյալ կերպ՝ «© Եվրոպայի խորհուրդ, հրապարակման տարեթիվ»: Բոլոր այլ հարցումները, որոնք վերաբերում են փաստաթղթի ամբողջական կամ մի մասի վերարտադրմանը/թարգմանությանը պետք է ուղղվեն Հաղորդակցության և կապի հարցերով տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int): Այս հրապարակման հետ կապված բոլոր մյուս հարցադրումները պետք է ուղղվեն Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Լայնածավալ մարտահրավերների և բազմակող ծրագրերի իրականացման վարչություն (DGI-HRImplementation@coe.int).

Լայնածավալ մարտահրավերների և բազմակող ծրագրերի իրականացման վարչություն

Էջադրումը՝ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի,
Time to print տպարան

Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն

Եվրոպայի խորհրդի հրատարակություն
© Եվրոպայի խորհուրդ, դեկտեմբեր 2022

Եվրոպայի խորհուրդ
F-67075 Ստրասբուրգ, Սեդեքս
www.coe.int

ԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Պայմանագրային զինվորական ծառայություն անցնող քաղաքացիները, այդ թվում՝ կանայք, աշխատանքային հարաբերությունների մեջ են պետության հետ, այսինքն՝ զինծառայողն աշխատող է, իսկ պետությունը՝ գործատու:

Լինելով «համազգեստով քաղաքացի»՝ զինծառայողները, քաղաքացիական աշխատողների նման, ունեն մի շարք աշխատանքային իրավունքներ: Զինվորական ծառայության յուրահատուկ բնույթով պայմանավորված՝ զինծառայողներն ունեն աշխատանքային իրավունքների որոշ սահմանափակումներ, սակայն, դրա հետ մեկտեղ, նաև որոշ հավելյալ իրավունքներ և սոցիալական երաշխիքներ: Զինվորական ծառայության ընթացքում զինծառայողները, նրանց կյանքը, առողջությունն ու արժանապատվությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են:

Պետությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանայք կարողանան պահպանել իրենց աշխատանքային և անձնական կյանքի ճիշտ հավասարակշռությունը: Այսինքն՝ կանայք, անկախ իրենց ընտանեկան հանգամանքներից, պետք է կարողանան ներգրավվել զինծառայության, չզրկվեն աշխատանքից, առաջխաղացում ունենան և միաժամանակ կարողանան բավարար ժամանակ հատկացնել իրենց անձնապես և իրենց ընտանիքին:

ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Ծառայողական շաբաթվա տևողությունը կին զինծառայողների համար 5 օր է՝ հանգստյան 2 օրով: Կին զինծառայողների շաբաթական ծառայողական ժամանակի ընդհանուր տևողությունը, որպես կանոն, չպետք է գերազանցի շաբաթական 40 ժամը, ընդ որում՝ ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը չի կարող անցնել 8 աշխատանքային ժամից: Դրանից դուրս կատարվող աշխատանքն արտաժամյա աշխատանք է:

Եթե կին զինծառայողը շաբաթվա ընթացքում 40 ժամից ավելի է ծառայում, և հնարավոր չէ նրան հանգիստ տալ այդ շաբաթվա մյուս օրերին, ապա այդ ժամանակը զինծառայողին տրվում է հանգստի լրացուցիչ օրերի ձևով, որոնք կարող են միացվել հերթական արձակուրդին:

Սակայն արտաժամյա աշխատանքը չպետք է.

ա) 4 ժամից ավելի լինի՝ երկու իրար հաջորդող օրերի ընթացքում,
բ) 180 ժամից ավելի լինի՝ մեկ տարվա ընթացքում:

Այնուհանդերձ, այս ընդհանուր կանոններից նախատեսվում են բացառություններ զինծառայողների համար: Մասնավորապես, մարտական հերթապահությունը, զորավարժությունները և նման այլ հատուկ միջոցառումներն անցկացվում են առանց ծառայության ժամանակի ընդհանուր տևողության սահմանափակման: Զորամասի մարտական և զորահավաքային պատրաստության հետ անմիջականորեն կապված շտապ միջոցառումները կատարվում են զորամասի հրամանատարի հրամանով օրվա ցանկացած ժամին՝ զինծառայողներին հանգստի համար տրամադրելով առնվազն 4 ժամ:

Զինծառայողները պետք է ծառայողական օրվա ընթացքում հանգստի և սնվելու ընդմիջում անեն: Այդ ընդմիջումը պետք է լինի առնվազն 30 րոպե:

Բացի դրանից, զինծառայողներին պետք է հատուկ ընդմիջում տրամադրվի, եթե ծառայողական պարտականությունները կատարվում են 40 աստիճան ցելսիուսից բարձր կամ 10 աստիճան ցելսիուսից ցածր ջերմաստիճանի պայմաններում:

Եթե երեխային կրծքով կերակրող կին զինծառայողը վերադարձել է ծառայության, ապա մինչև երեխայի մեկուկես տարին լրանալը, բացի հանգստի և սնվելու համար տրամադրվող ընդմիջման ժամերից, երեխային կերակրելու համար յուրաքանչյուր երեք ժամը մեկ տրամադրվում է լրացուցիչ ընդմիջում՝ առնվազն 30 րոպե տևողությամբ:

Աշխատանքային օրերի (հերթափոխերի) միջև ամենօրյա անընդմեջ հանգստի տևողությունը պետք է լինի առնվազն 11 ժամ:

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Զինծառայողներն ունեն ***արձակուրդի իրավունք***: Կին զինծառայողներին, ինչպես պայմանագրային մյուս զինծառայողներին, տրվում են հետևյալ արձակուրդները.

- հերթական (ամենամյա),
- լրացուցիչ,
- ուսումնական,
- հիվանդության պատճառով (վերականգնողական),
- հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի համար:

Հերթական (ամենամյա) արձակուրդը զինծառայողի հիմնական արձակուրդն է: Այն տրվում է ամեն տարի՝ հետևյալ տևողությամբ.

- 30 օր՝ մինչև 15 տարի ծառայածներին,
- 35 օր՝ 15-ից մինչև 25 տարի ծառայածներին,
- 40 օր՝ 25 տարուց ավելի ծառայածներին:

Հերթական արձակուրդը կարող է տրվել զինծառայողին ***կամ ամբողջությամբ, կամ երկու մասով՝*** ըստ զորամասի հրամանատարի կողմից հաստատված ժամանակացույցի: Եթե հերթական արձակուրդը տրամադրվում է մասերով, ապա մասերից մեկը պետք է կազմի առնվազն ***10 աշխատանքային օր՝*** ինգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում:

Ռազմաուսումնական հաստատությունն (ՌՈՒՀ) ***ավարտելուց անմիջապես հետո*** զինծառայողին տրվում է հերթական արձակուրդ:

Պայմանագրային ***զինծառայող ամուսինների ցանկությամբ*** նրանց հերթական ***արձակուրդը տրվում է միաժամանակ:***

Հերթական արձակուրդից պայմանագրային զինծառայողին ***հետ կանչել*** թույլատրվում է ***միայն ծառայողական ծայրահեղ անհրաժեշտութ-***

յան դեպքում՝ արձակուրդ տրամադրած հրամանատարի (պետի) հրամանով:

Եթե հիվանդության կամ այլ հարգելի պատճառով զինծառայողը չի օգտվել հերթական և (կամ) լրացուցիչ արձակուրդից, ապա դրանք տրվում են հաջորդ տարվա առաջին 6 ամսվա ընթացքում:

Լրացուցիչ արձակուրդը տրվում է.

- 10 օրացուցային օր՝ առանձնահատուկ կամ վնասակար պայմաններում ծառայողներին[1],
- մինչև 10 օրացուցային օր՝ զինծառայողի ընտանիքի անդամի ամուսնության, ծանր հիվանդության կամ մահվան դեպքում, կամ այլ հարգելի պատճառներով:

Զինծառայողներն իրենց ***ընտանիքի հիվանդ անդամին խնամելու համար*** իրավունք ունեն գնալու արձակուրդ: Զինծառայողն այս արձակուրդից կարող է օգտվել իր ընտանիքի անդամի հիվանդության մասին ***քաղաքացիական կամ զինվորական բուժհաստատության տված տեղեկանքի*** հիման վրա: Խնամքի արձակուրդը կարող է տևել մինչև 40 օր տարվա ընթացքում, ներառյալ 30 օր չվճարվող արձակուրդ և մինչև 10 օր լրացուցիչ արձակուրդ:

Ուսումնական արձակուրդը լինում է երկու տեսակի՝ ռազմաուսումնական հաստատություններում սովորողների համար և միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների համար:

ՌՈՒՀ-երում սովորողներին արձակուրդ տրվում է ուսման ընդմիջումների ընթացքում.

- ***ձմռանը՝*** 15 օրացուցային օր և
- ***ամռանը՝*** 30 օրացուցային օր:

---

1 Զինծառայության առանձնահատուկ և վնասակար պայմանները նախատեսված են «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» 2014թ. հուլիսի 3-ի թիվ 712-Ն ՀՀ կառավարության որոշմամբ:

Միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող զինծառայողներին արձակուրդ տրվում է.

- յուրաքանչյուր ***քննության*** համար՝ 3 աշխատանքային օր,
- յուրաքանչյուր ***ստուգարքի*** համար՝ 2 աշխատանքային օր,
- ***դիպլոմային աշխատանքի*** նախապատրաստման և պաշտպանության համար՝ 30 աշխատանքային օր,
- ***պետական (ավարտական) յուրաքանչյուր քննության*** համար՝ 6 աշխատանքային օր:

Այս արձակուրդից օգտվելու համար պետք է հրամանատարին (պետին) ներկայացնել ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանք, որը կներառի քննությունների, ստուգարքների, դիպլոմային աշխատանք կատարելու և (կամ) պետական քննության վերաբերյալ տեղեկություններ (դրանց քանակը, ամսաթիվը):

Զինծառայողին ***հիվանդության պատճառով*** (վերականգնողական) արձակուրդ տրվում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից՝ բուժման մեջ լինելու կամ վերականգնողական ժամանակահատվածի համար՝ մինչև 90 անընդմեջ օրացուցային օր ժամկետով: Այս արձակուրդները տրվում են ռազմաբժշկական հաստատության կամ հանձնաժողովի տված տեղեկանքի հիման վրա: Բուժումից կամ վերականգնումից հետո զինծառայողներն անցնում են ռազմաբժշկական փորձաքննություն, և նրանց բուժումը կամ վերականգնումը կարող է երկարաձգվել ևս 30 օրացուցային օր ժամկետով:

Հղիության ու ծննդաբերության արձակուրդը կին զինծառայողին տրվում է.

- ***140 օր*** (70 օր՝ հղիության և 70 օր՝ ծննդաբերության),
- ***155 օր*** (70 օր՝ հղիության և 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության դեպքում.
- ***180 օր*** (70 օր՝ հղիության և 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Համապատասխան տևողությամբ հղիության արձակուրդից օգտվելու համար անհրաժեշտ է ներկայացնել հղիության վերաբերյալ տեղեկանք, բարդ ծննդաբերության դեպքում՝ համապատասխան բժշկական տեղեկանք, իսկ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում՝ երեխաների ծննդյան վկայականների պատճենները:

Երեխայի խնամքի համար արձակուրդ տրվում է մինչև երեխայի երեք տարեկան դառնալը: Այս արձակուրդը կարող է տրվել ***կամ ամբողջությամբ, կամ մասերով՝*** հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտից հետո:

Հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի արձակուրդի ընթացքում զինծառայողների պաշտոնը, կոչումը և աշխատավարձը պահպանվում են: Հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի* համար արձակուրդը հաշվարկվում է կին զինծառայողի անընդհատ ծառայության ստաժում:

* Երեխայի խնամքի արձակուրդում լինելու ժամանակահատվածը չի հաշվարկվում միայն հերթական զինվորական կոչումը շնորհելու համար անհրաժեշտ ծառայության ստաժում:

Երեխայի խնամքի արձակուրդ կարող է տրվել նաև արական սեռի զինծառայողին, եթե.

1. նրա կինը մահացել է կամ դատարանի ակտով մահացած կամ անհայտ բացակայող է ճանաչվել,
2. զինծառայողն ամուսնալուծվել է, և դատարանը երեխայի խնամքը հանձնել է հորը, կամ մյուս ամուսնուն անգործունակ է ճանաչել, կամ զրկել է ծնողական իրավունքներից,
3. նրա կինը շարունակում է աշխատել և չի դիմել իր գործատուին երեխայի խնամքի արձակուրդ գնալու համար:

1-ին և 2-րդ դեպքերում զինծառայողը պետք է զորամասի (զինվորական մարմնի) հրամանատարին (պետին) ներկայացնի դատարանի համապատասխան ակտերը, որոնք օրինական ուժի մեջ են մտել, իսկ 3-րդ

դեպքում՝ կնոջ գործատուի կողմից տրված տեղեկանքը:

Եթե երեխայի խնամքի արձակուրդում գտնվող արական սեռի զինծառայողի

- արձակուրդի հիմքը վերանում է կամ
- նա իր կամքով ցանկանում է ժամանակից շուտ վերադառնալ ծառայության կամ
- երեխայի խնամքի արձակուրդն ավարտվում է,

ապա ծառայությունը շարունակելու մտադրության մասին նա գրավոր (զեկուցագրով) տեղեկացնում է զորամասի հրամանատարին (զինվորական մարմնի պետին) առնվազն 10 աշխատանքային օր առաջ:

Արական սեռի զինծառայողի հերթական արձակուրդն իր ցանկությամբ (զեկուցագրի հիման վրա) կարող է տրամադրվել նրա կնոջ հղիության ու ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածում՝ հղիության ու ծննդաբերության մասին բժշկական հաստատության կողմից տրված և կնոջ գործատուի կողմից տրված՝ հղիության ու ծննդաբերության արձակուրդում գտնվելու մասին տեղեկանքների հիման վրա:

Եթե արական սեռի քաղաքացին (ներառյալ՝ զինծառայողը) չի կարող օգտվել երեխայի խնամքի արձակուրդից, ապա նրան կարող է տրամադրվել ***հայրության արձակուրդ:*** Երեխայի ***ծնվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում,*** նորածնի հայրն իրավունք ունի ***5 օր արձակուրդ*** վերցնել: Դրա համար անհրաժեշտ է ներկայացնել երեխայի ծննդյան վկայականի պատճենը և համապատասխան դիմում կամ զեկուցագիր:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ. Հաշվի առնելով այն, որ զինված ուժերն ապահովում են ազգային անվտանգությունը՝ արձակուրդ գնալու իրավունքը կարող է բացառիկ դեպքերում սահմանափակվել, օրինակ՝ եթե զինծառայողին (թե՛ կին, թե՛ տղամարդ) հնարավոր չէ հեշտությամբ փոխարինել, քանի որ նա պատասխանատու և յուրահատուկ պաշտոն է զբաղեցնում, ունի հազվագյուտ տեխնիկական գիտելիքներ և հմտություններ, կամ ներգրավված է մարտական առաջադրանքներում, կամ

զինված ուժերը բերվել են մարտական պատրաստականության համապատասխան աստիճանի, կամ հայտարարվել է ռազմական դրություն: Սակայն սա չի նշանակում, որ զինծառայողին կարելի է տարիներով արձակուրդ չտալ. պետությունը պետք է ապահովի, որ նույնիսկ այսպիսի յուրահատուկ կարգավիճակով կամ արտառոց հանգամանքներում զինծառայողները ևս արձակուրդ գնան և բավարար չափով հանգստանան:

ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կին զինծառայողներն ունեն պատշաճ դրամական ապահովության իրավունք: Արգելվում է կին զինծառայողներին, տղամարդ զինծառայողների համեմատ, ավելի քիչ վճարել, եթե նրանք կատարում են ծառայողական նույն պարտականությունները, ունեն նույն պաշտոնը, կոչումը և ծառայության ստաժը:

Պայմանագրային զինծառայողների դրամական ապահովությունը ներառում է.

- պաշտոնային դրույքաչափը (հիմնական աշխատավարձ),
- լրավճարները և
- հավելումները:

Քանի որ զինծառայողները պետական ծառայողներ են, նրանց աշխատավարձը սահմանվում է բազային աշխատավարձը[2] և զինծառայողի պաշտոնի գործակիցը[3] բազմապատկելով.

Պաշտոնային դրույքաչափ = բազային աշխատավարձ x գործակից

Զինծառայողներին տրվում են նաև լրավճարներ[4] և հավելումներ[5], որոնք ավելացվում են աշխատավարձին:

Զինծառայողները նաև իրավունք ունեն ստանալու ճանապարհածախս՝ արձակուրդ մեկնելու և արձակուրդից վերադառնալու համար:

Արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդի անցկացման վայրից վերադառնալիս զինծառայողի տրանսպորտային ծախսերը փոխհատուցվում են հետևյալ չափերով.

1) մինչև 30 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 600 դրամ,

2) 30-60 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 1000 դրամ,

3) 60-100 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 1200 դրամ,

4) 100-150 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 2000 դրամ,

5) 150-200 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 2400 դրամ:

6) 200-250 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 3000 դրամ,

7) 250-300 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 6000 դրամ,

8) 300-350 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 8000 դրամ,

9) 350-700 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 10000 դրամ՝ գումարած 350 կմ գերազանցող՝ համապատասխան հեռավորության համար սահմանված գումարը,

10) 700 և ավելի կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 20000 դրամ:

Ընդ որում, եթե զինծառայողին ուղեկցում են նաև ընտանիքի անդամներ, ապա նրանցից յուրաքանչյուրին ևս պետք է տրամադրվի ճանապարհածախս՝ զինծառայողին հասանելիք գումարի կեսի չափով:

Արձակուրդ մեկնելու և վերադառնալու ճանապարհածախսի գումարը ստանում է իրեն արձակուրդ տալու իրավասու հրամանատարի (պետի) ***հրամանի*** կամ ***արձակուրդային թերթիկի*** հիման վրա՝ 1) կամ զինծառայողի՝ արձակուրդի անցկացման վայր մեկնելու օրը, ***կամ*** 2) զինծառայողի ցանկությամբ՝ արձակուրդից վերադառնալուց հետո՝ 3 օրվա ընթացքում:

Այս գումարը ստանալու համար զինծառայողը պետք է զեկուցագիր ներկայացնի իր հրամանատարին (պետին)՝ նշելով արձակուրդի անցկացման վայրը և իրեն ուղեկցող ընտանիքի անդամների քանակը:

Զինծառայող կանայք իրավունք ունեն ստանալու.

- ***մայրության նպաստ,***
- ***երեխայի ծննդյան միանվագ նպաստ,***
- ***մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ:***

Մայրության նպաստը միանվագ վճար է, որը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Մայրության նպաստ = մայրության և ծննդաբերության արձակուրդի օրերի քանակ x միջին օրական աշխատավարձ:

Սկզբում հաշվարկվում է զինծառայողի միջին ամսական աշխատավարձը (ներառյալ նախորդ 12 ամիսների աշխատավարձը, լրավճարները, պարգևավճարները, հավելավճարները), այնուհետև այդ թիվը բաժանվում է 30,4-ի՝ միջին օրական աշխատավարձը որոշելու համար, և միջին օրական աշխատավարձի գումարը բազմապատկվում է հղիության և ծննդաբերության արձակուրդի օրերի քանակով:

Այս նպաստը ստանալու համար զինծառայողը պետք է իր ծառայության վայրին մոտ միասնական սոցիալական ծառայության տարածքային բաժին ներկայացնի դիմում և իր անձը հաստատող փաստաթուղթ:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափերն են.

- առաջին երեխայի ծնվելու դեպքում՝ երեք հարյուր հազար դրամ,
- երկրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ երեք հարյուր հազար դրամ,
- երրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն դրամ,
- չորրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն դրամ,
- հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ:

Եթե միաժամանակ մեկից ավելի երեխա է ծնվում, ապա յուրաքանչյուր երեխայի համար վճարվում է նոր ծնված երեխաներից ամենաբարձր կարգաթիվ ունեցող երեխայի համար սահմանված չափով: Օրինակ՝ եթե զինծառայողն ունի երկու երեխա, և ծնվում են երկվորյակներ,

ապա նորածիններից յուրաքանչյուրի համար վճարվում է մեկական միլիոն դրամ (այսինքն՝ չորրորդ երեխայի համար սահմանված գումարի չափով), իսկ եթե ունի երեք երեխա, և ծնվում են երկվորյակներ, ապա նորածիններից յուրաքանչյուրի համար վճարվում է մեկուկես միլիոն դրամ (այսինքն՝ հինգերորդ երեխայի համար սահմանված գումարի չափով):

Երեխայի ծննդյան միանվագ նպաստը ստանալու համար կին զինծառայողը պետք է հատուկ հաշիվ բացի բանկում և դիմում ներկայացնի իր ծառայության վայրին մոտ միասնական սոցիալական ծառայության տարածքային բաժին՝ կից ներկայացնելով իր անձը հաստատող փաստաթուղթ և երեխայի ծննդյան մասին փաստաթղթերը:

Երեխայի խնամքի նպաստն ամսական վճար է, որը տրվում է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող (կամ թեկուզ չգտնվող) զինծառայողին՝ ***մինչև երեխայի երկու տարեկան դառնալը:***

Երեխայի խնամքի ամսական նպաստը 37 500 դրամ է[6], եթե զինծառայողը գտնվում է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում: Եթե զինծառայողը վերադառնում է ծառայության, ապա այդ դեպքում ևս նրան տրամադրվում է երեխայի խնամքի ամսական նպաստ՝ 31 600 դրամ: Ընդ որում, եթե զինծառայողը առնվազն մեկ տարի հաշվառված է և բնակվում է գյուղական բնակավայրում, ապա նա լրացուցիչ կստանա նաև 37 500 դրամ: Իսկ եթե ծնվել են մեկից ավելի երեխաներ, ապա այս գումարները տրվում են յուրաքանչյուր երեխայի համար:

Երեխայի խնամքի ամսական նպաստը ստանալու համար զինծառայողը պետք է դիմում ներկայացնի իր ծառայության վայրին մոտ միասնական սոցիալական ծառայության տարածքային բաժին՝ կից ներկայացնելով իր անձը հաստատող փաստաթուղթը և երեխայի ծննդյան մասին փաստաթուղթը: Դիմումը պետք է ներկայացնել երեխայի 70 օրական դառնալուց հետո՝ 12 ամսվա ընթացքում: Եթե նույնիսկ դիմումը ներկայացվել է, օրինակ, երեխայի ծնվելուց 10 ամիս հետո, ապա նախորդ ամիսների վճարը ևս վճարվում է:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Պետությունը պարտավոր է հոգ տանել զինծառայողների առողջության համար: Զինծառայողների բժշկական զննությունը և բուժումն անվճար է: Ավելին, ոչ միայն զինծառայողը, այլև նրա ընտանիքի անդամները ևս անվճար բժշկական օգնության իրավունք ունեն:

Պետությունն ապահովում է զինծառայողների անվճար և որակյալ բժշկական զննությունն ու բուժումը.

- ռազմաբժշկական հաստատություններում,
- քաղաքացիական բժշկական հաստատություններում՝ անհրաժեշտության դեպքում,
- առողջարանային բժշկական հաստատություններում՝ ցուցման առկայության դեպքում,
- օտարերկրյա բժշկական հաստատություններում՝ Հայաստանում բուժման անհնարինության դեպքում:

Զինված ուժերում կանանց առողջության պահպանման նպատակով նախատեսված են հետևյալ հատուկ միջոցները.

ա) կին զինծառայողների բժշկական զննությունը և բուժումը (հատկապես գինեկոլոգիական խնդիրների դեպքում) պետք է կատարվեն առանձին՝ հիգիենայի կանոնների խիստ պահպանման պայմաններում,

բ) կին զինծառայողներն իրավունք ունեն տարեկան առնվազն երկու անգամ անցնելու բժշկական զննություն՝ հղիությունը, գինեկոլոգիական կամ վեներական խնդիրները վաղ հայտնաբերելու համար,

գ) զորամասում, դաշտային պայմաններում կին զինծառայողների համար պետք է լինեն անձնական հիգիենայի հատուկ սենյակներ կամ

վրաններ՝ անհրաժեշտ նվազագույն բոլոր պարագաներով (մաքուր ջուր, օճառ, սրբիչ և այլն),

դ) կին զինծառայողները պետք է իրազեկվեն իրենց առողջության, հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցների մասին:

Առանձնահատուկ հոգածության և պաշտպանության կարիք ունեն ***հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող*** կին զինծառայողները:

Արգելվում է հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց ներգրավել ծանր, առանձնապես ծանր, վնասակար և առանձնապես վնասակար աշխատանքներում[7]:

Զինծառայող հղի կանանց համար նախատեսված են հետևյալ հատուկ պայմանները.

ա) հղի կանայք պետք է լինեն բուժկանխարգելիչ հաստատության կամ առողջապահության համակարգի պետական կամ տարածքային բուժհաստատության բժիշկ-գինեկոլոգի պարբերական հսկողության ներքո,

բ) զինծառայող հղի կանայք չբարդացած ընթացքով հղիության դեպքում իրավունք ունեն բժշկի ընդունելության՝ հետևյալ պարբերականությամբ.

- մինչև 20 շաբաթականը՝ ամիսը մեկ անգամ,
- 20-ից մինչև 30 շաբաթականը՝ երկու շաբաթը մեկ անգամ,
- 30 շաբաթականից հետո՝ ամեն շաբաթ,

գ) ծննդաբերական բաժանմունք չունեցող բնակավայրերում ապրող հղի զինծառայող կանայք նախօրոք (37-38 շաբաթական) հոսպիտալացվում են բուժական հաստատությունների նախածննդաբերական բաժանմունքներում, իսկ բարդացած ընթացքի դեպքում բժշկական

---

7 Հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց հակացուցված աշխատանքների տեսակները նախատեսված են «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2308-Ն ՀՀ կառավարության որոշմամբ:

ցուցումներով հոսպիտալացումը կարող է կատարվել ցանկացած ժամանակ,

դ) բժիշկ-գինեկոլոգի՝ հղիության ժամկետի վերաբերյալ տված տեղեկանքի հիման վրա հղիության ընթացքում և կրծքով կերակրելիս իգական սեռի զինծառայողներն ազատվում են վերակարգից, շարային և ֆիզիկական պատրաստությունից, տեղափոխվում են մասնագիտական վնասակարության ազդեցությունը բացառող աշխատանքի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ

Բոլոր իրավական ակտերը՝ 2022թ. նոյեմբերի 1-ի դրությամբ

Օրենքներ

- 2004թ. նոյեմբերի 9-ի ՀՀ աշխատանքային օրենսգիրք
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017թ. նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենք
- «Պետական նպաստների մասին» 2013թ. դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենք
- «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013թ. դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենք

Կառավարության որոշումներ

- ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը և վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 710-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 3-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2018թ. օգոստոսի 9-ի «ՀՀ տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդի անցկաց-

ման վայրից վերադառնալիս զինծառայողի տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու կարգը և պայմանները, զինվորական ծառայությունից արձակվելիս չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց զինծառայողին տրվող փոխհատուցման չափը սահմանելու, ինչպես նաև ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 778 և 2004 թվականի մայիսի 6-ի թիվ 886-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 898-Ն որոշում

- ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 29-ի «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1566-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2014թ. մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» թիվ 2308-Ն որոշում

Պաշտպանության նախարարի հրամաններ

- ՀՀ պաշտպանության նախարարի 2013թ. դեկտեմբերի 4-ի «Խաղաղ պայմաններում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բժշկական ապահովման ձեռնարկը հաստատելու մասին» թիվ 1393 հրաման
- ՀՀ պաշտպանության նախարարի 2020թ. մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողներին արձակուրդներ տալու կարգը հաստատելու մասին» թիվ 460 հրաման

Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության տնօրինության մշակած սույն ձեռնարկի նպատակն է բարձրացնել զինված ուժերում կանանց աշխատանքային իրավունքների և սոցիալական երաշխիքների վերաբերյալ իրազեկվածությունը:

Սույն նյութը կարող է օգտակար լինել զինված ուժերի կազմը համալրելու մտադրություն ունեցող կամ արդեն իսկ ծառայող կանանց, ինչպես նաև կին զինծառայողների ծառայակից տղամարդկանց, այդ թվում՝ հրամանատարական կազմի համար:

Ձեռնարկը պարզաբանում է կին զինծառայողների աշխատանքային իրավունքները, դրանց սահմանափակումները, ինչպես նաև որոշ հավելյալ իրավունքներ ու սոցիալական երաշխիքներ: Սակայն սույն ձեռնարկում ներառված իրավունքների և արտոնությունների նկարագիրը ամբողջական չէ: Լրացուցիչ կամ առավել մանրամասն տեղեկություն ստանալու համար կարող եք դիմել զորամասերի հրամանատարական կազմին կամ իրավաբաններին:

Եվրոպայի խորհրդի գրասենյակ Երևանում
«Էլիտ պլազա» բիզնես կենտրոն
Մովսես Խորենացու փող., 15 շենք, 5-րդ հարկ
Երևան 0010, Հայաստան
www.coe.am

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքի՝ մարդու իրավունքների հարցերով զբաղվող առաջատար կազմակերպություն է: Նրա կազմում են 46 անդամ պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանն ուղղված միջազգային փաստաթղթի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրականացումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE